Հայկական Կարիտաս
Armenian Caritas

www.caritas.am
info@caritas.am
caritas@caritasarmenia.org
(+374 312) 5 72 01

«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ
ՀՀ, ք.Գյումրի 3118, Հ.Սարգսյան փող., նրբանցք 3, տուն 8

"Armenian Caritas" benevolent NGO
8 H.Sargsyan street, side-street 3, Gyumri, 3118, Armenia

AC-139/1-21

01 հոկտեմբերի, 2021թ.

Գյումրիի քաղաքապետ
պարոն Սամվել Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան,

2002թ. հունվարից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը Գյումրիում իրականացնում է «Տարեցների ցերեկային խնամքի կենտրոն», «Տնային խնամք» և «Տաք ձմեռ» ծրագրերը: Ծրագրերում ընդգրկված են 400 կարիքավոր ծեր շահառու, որոնք գտնվում են ծրագրերն իրականացնողների մշտական ուշադրության կենտրոնում:

Ծրագրերի նպատակն է նպաստել ծերերի կենսակերպի որակի բարձրացմանը՝ ապահովելով նրանց ճկուն, հետևողական, կարեկից և անհատական խնամք, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկությունը ծերերի առջև ծառացած հիմնախնդիրների շուրջ: «Տաք ձմեռ» ծրագիրը նպաստում է տարեցների առողջության պահպանմանը՝ ձմռան ամիսներին հոգալով նրանց բնակարանների ջեռուցման խնդիրները:

Դոնորի պայմանի համաձայն 2011 թվականին տեղի է ունեցել քաղաքականության փոփոխություն, ըստ որի ծրագրի իրականացման բոլոր աշխարհագրական վայրերում /Գյումրի, Վանաձոր, Տաշիր, Գավառ, Արտաշատ/ ՏԻՄ-երը պետք է կիսեն սոցիալական պատասխանատվությունը և իրենց կողմից ներդրում կատարեն ծրագրի իրականացմանը: Իրավամբ, նախորդ 8 տարիներին ՏԻՄ-երը իրենց ներդրումն են ունեցել և համագործակցությունը հաջողությամբ կայացել է:

Ներկայիս «Տաք ձմեռ» ծրագիրը ֆինանսավորման համար ներկայացվել է «ԱՄՆ Եպիսկոպոսների համագումար»-ին, «Իտալիայի Եպիսկոպոսների համագումար»-ին, «Ավստրիական Կարիտաս» կազմակերպությանը, JTI (Ջեյ Թի Ինթերնեյշնլ Լյուքսեմբուրգ) կազմակերպությանը, այլ անհատ ներդնողների: Դոնոր կազմակերպությունները համաձայնել են աջակցել տարեցների հիմնախնդիրների որոշակի թեթևացմանը միայն այն պայմանով, որ տեղական ինքնակառավարման մարմինը համապատասխան քաղաքում իր ներդրումն ունենա առնվազն 5000 դրամի սահմանում՝ յուրաքանչյուր շահառուի համար: Ձեր ներդրումը կդիտվի որպես ներդնողներին քաջալերող հանգամանք, որի արդյունքում յուրաքանչյուր շահառու կստանա 40000 դրամ փոխհատուցում ձմռան ընթացքում իրենց ջեռուցման կարիքները հոգալու համար:

Մենք պատրաստ ենք լրացուցիչ տեղեկություններ տրամադրել գրավոր կամ հանդիպման ժամանակ:

Կանխավ շնորհակալություն:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 05 10 2021 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ ԷՆ 17858

Հարգանքներով՝

Գագիկ Տարասյան
Գործադիր տնօրեն